ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

18.10.2018 12:14

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը 2018թ. հոկտեմբերի 17-ին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր:

Հուշագրի շրջանակներում կողմերը պատրաստվում են համագործակցել մարզի բնակիչների համար իրազեկման ծրագրերի իրականացման, անվճար և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրման ուղղություններով:

Ողջունելով ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներին՝ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը նշեց. «**Այս ոլորտում փաստաբանների պալատի հետ համատեղ հուշագիր ստորագրելով՝ հստակ ամրագրում ենք իրավագիտակցության բարձրացման առնվազն տեխնիկական անհրաժեշտություն համարվող քայլերից մեկը: Նպատակը շատ հստակ է. մարզում հասանելի դարձնել փաստաբանի ինստիտուտը և հանրային պաշտպանին հասու դարձնել մարզի օրենքով սահմանված խմբերին**»:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհակալություն հայտնեց համագործակցությանը սկիզբ դնելու ջանքերի համար և հայտնեց, որ հուշագրով ամրագրված պայմանավորվածությունները նպաստելու են հանրային իրավագիտակցության բարձրացմանը: «**Ցանկանում ենք այս համագործակցությամբ նպաստել իրավական մշակույթի բարձրացմանը: Բոլորս էլ լավ գիտենք, որ մարդը և նրա իրավունքներն ու ազատությունները պետության կողմից ճանաչված բարձրագույն արժեք են: Եվ այս առումով մեր բոլորի ջանքերը կարծում եմ ուղղված են մարդուն կարևորելուն և նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելուն**»,-արձանագրեց Արա Զոհրաբյանը:

Ըստ հուշագրի Կոտայքի մարզպետարանը վարչական շենքում անվճար տրամադրելու է տարածք ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Հրազդան քաղաքի նստավայրը տեղակայելու համար: Կողմերի համաձայնությամբ տարածքից օգտվելու իրավունք ունեն նաև մարզի տարածքում գործունեություն իրականացնող այն փաստաբանները, ովքեր չունեն փաստաբանական

գործունեություն իրականացնելու տարածք: Իր հերթին ՀՀ փաստաբանների պալատը պատրաստակամություն է հայտնել տարածքում ապահովել հանրային պաշտպանների և փաստաբանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է նաև մարզի ավագ դպրոցներում սեմինարներ կազմակերպել աշակերտներին Մարդու իրավունքների մասին իրազեկելու և փաստաբանի մասնագիտության հիմունքներին ծանոթացնելու նպատակով: Հանրային պաշտպանների, ինչպես նաև տարածքը զբաղեցնող փաստաբանների միջոցով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր մարզի բնակիչների համար կազմակերպելվելու է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Կողմերը պայմանավորվել են անվճար իրավաբանական խորհրդատվության և տարածքների տրամադրման հարցերը քննարկել նաև մարզի մյուս քաղաքների (Աբովյան և Եղվարդ) համար:

Նշենք, որ մարզում գործում է 6 հանրային պաշտպան:



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
РА АДМИНИСТРАЦИЯ КОТАЙКСКОЙ ОБЛАСТИ
RA KOTAYK REGIONAL ADMINISTRATION
http://kotayk.gov.am
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA





Առաջարկվող նորություններ

20.10.2014ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ

29.10.2014
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.10.2014ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ‘ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ’ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

07.11.2014ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է ‘ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ’ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })